

Աշխարհում ապրում է 6,8 մլրդ մարդ



ՄԱԿ-ի գնահատականներով ամեն տարի երկրի բնակչությունը աճում է մոտ 80 մլն մարդով, ընդ որում այդ աճի 95 տոկոսը ընկնում է զարգացող երկրներին: Առավել հավանական կանխատեսումներով՝ 2050 թ. մոլորակի բնակչությունը կկազմի 9 մլրդ մարդ:

Երկրի բնակչությունը ծերանում է

2050 թ. 60-ն անց ու ավելի մարդկանց տարիքը գրեթե կենսապատկերի հասնելով 2 միլիարդի և կգերազանցի մինչև 15 տարեկան երեխաների թիվը: Փորձագետները նշում են, որ եթե 1950 թ. մոլորակի բնակչության ընդհանուր թվաքանակի միայն 8%-ն էին կազմում 60-ն և ավելի տարիքի մարդիկ, ապա 2009-ին այս մասնաբաժինը կավելանա մինչև 11% և 2050-ին կկազմի 22%: Հայաստանում նույնպես առկա է այս ժողովրդագրական խնդիրը, մեզանում 65 և ավելի մեծ տարիքի մարդկանց թիվը կազմում է ավելի քան 13%, որոնցից 60%-ը կանայք են:

Հայաստանում ավելի երկար են ապրում, քան միջինն աշխարհում

Աշխարհի տարածաշրջանների մեծ մասում մարդու կյանքի սպասվող տևողությունը շարունակում է ավելանալ: Այսօր միջինը մարդիկ ապրում են 67,2 տարի, ընդ որում՝ արդյունաբերական զարգացած երկրներում 76,5, զարգացող երկրներում 65,4 տարի: Հայաստանում կյանքի սպասվող միջին տևողությունը ԱՊՀ երկրների շարքում ամենաբարձրերից մեկն է՝ 70,2 տարեկան տղամարդկանց շրջանում և 76,6 կանանց:

Ժողովրդագրական ճգնաժամ



Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով այսօր Հայաստանի բնակչությունը կազմում է 3 մլն 239

հազար մարդ: 2008-ին Հայաստանում ծնվել է 41238 երեխա, ինչը 2,8%-ով գերազանցում է 2007-ին արձանագրված ցուցանիշը: Եվ այնուամենայնիվ, ՄԱԿ-ի փորձագետների գնահատականներով՝ 2050-ին Հայաստանի բնակչությունը կարող է կրճատվել 15-20%-ով, իսկ հարևան երկրներում այս ցուցանիշը կրկնակի կաճի: Եվ դա արդեն լուրջ հիմնախնդիր է ազգային անվտանգության համատեքստում:

Փորձագետները նման եզրակացություն պատահական չեն արել, քանի որ 2006 թ. ՄԱԲՀ-ի աջակցությամբ անցկացված «Ընտանիք» ինստիտուտի հետազոտությունը ցույց տվեց, որ Հայաստանում հարցվածների մեծ մասի համար իդեալական է համարվում երկու երեխայով ընտանիքի մոդելը, ինչը չի ապահովում բնակչության պարզ վերարտադրությունը, և խոսքը ժողովրդագրական ճգնաժամի մասին է: Ժողովրդագիրները համարում են, որ բնակչության ներկայիս մակարդակը պահպանելու համար վերարտադրությունը պետք է կազմի 2,1 երեխա յուրաքանչյուր կնոջ հաշվով, սակայն Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ այս ցուցանիշը Հայաստանում կազմում է ընդամենը 1,4:

Աշխարհը և քաղաքականությունը

Կանայք կարող էին փրկել աշխարհը տնտեսական ճգնաժամից

Էջ 4



Անվճար հավելված

Հատուկ թողարկում, 2009

«Զորացնելով կնոջը՝ զորացնում ենք ընտանիքը»

Հուլիսի 11-ը Բնակչության համաշխարհային օրն է

«Համաշխարհային տնտեսական ճգնաժամը ստիպում է մեզ միջոցներ խնայել ու ծախսերը կրճատել այնտեղ, որտեղ դա հնարավոր է: Սակայն կանանց աջակցության մեր գործունեությունը պետք է շարունակվի: Զորացնելով կնոջը՝ մենք զորացնում ենք ընտանիքը: Աջակցելով կանանց՝ մենք փրկում ենք աշխարհը»:

Բան Կի Մուն, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար

Անցկացվում է ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի (ՄԱԲՀ) հովանու ներքո: Այն առաջին անգամ սկսեցին նշել 1989-ին ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հանձնարարականով, և այս տարի այն հորեյվանական է՝ 20-րդը: Իսկ հուլիսի 11-ի ընտրությունը պատահական չէր. 1987 թ. հենց այդ օրը երկրի բնակչությունը հասեց 5 մլրդ մարդու սահմանագիծը:

Օրվա թեման՝ արձագանքելով տնտեսական ճգնաժամին. կանանց համար ներդրումները խելամիտ ընտրություն են:

Օրվա թեմաներն էին.

- 2008-ին՝ Ընտանիքի պլանավորում և վերարտադրողական առողջության իրավունք
- 2007՝ Տղամարդիկ մայրական առողջության պահպանության գործընկերներ
- 2006-ին՝ Երիտասարդություն՝ հիմնախնդիրներն ու ապագան

Ինչ էլ ասենք ճգնաժամի մասին, դժվարություններին լավատեսորեն նայելու ցանկությունը մարդկության ընկալման մեջ առաջնայինն է, և այս առումով աշխարհի տարբեր ծայրերում վկայակոչում են «ճգնաժամ» բառի չինական հիերոգլիֆը, որը բաղկացած է երկու պատկերից՝ «վտանգ» և «հնարավորություն»: Իրոք, այնտեղ, որտեղ սպասվում են ամենամեծ խուճերը, թաքնված են նաև զարգացման համար ամենամեծ հնարավորությունները, միայն պետք է կարողանալ դրանցից օգտվել: Ըստ էության՝ ինչ հույսերը «ճգնաժամ» բառի մեջ նույն իմաստն էին դնում: Նրանց ընկալումներում դա որոշում կայացնելու պահն է, շրջադարձային կետ,

որից հետո աշխարհը զարգացման մոր հնարավորություն կստանա: ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը առաջարկում է տեսնել այդ հնարավորությունը, ինչպես նաև բոլոր մարդկանց համար լավագույն ապագան, կանանց աջակցելու մեջ: Կազմակերպության փորձագետները պնդում են, որ հոգևոր կանանց կատարված ցանկացած ներդրում տնտեսական զարգացման խթան է: «Չկան տնտեսական ու սոցիալական ավելի բարձր փոխհատուցում ապահովելու ներդրումներ, քան աղջիկների ու կանանց առողջության ու իրավունքների մեջ կատարված ներդրումները», - համոզված է ՄԱԲՀ-ի գործադիր տնօրեն Թորայա Օբեյդը:



Լուսանկարը՝ ՄԱԲՀ-ի հայաստանյան ներկայացուցչության

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ

Քանզի ամեն ոք կարևոր է

Աշխարհում քաջ հայտնի իր այս կարգախոսով է ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը՝ ՄԱԲՀ-ը, պաշտպանում կանանց, տղամարդկանց և երեխաների իրավունքները՝ առողջ և հավասար հնարավորություններով կյանք ունենալու: ՄԱԲՀ-ը օժանդակում է երկրներին՝ օգտագործելու ժողովրդագրական տվյալները քաղաքականության մեջ և այն ծրագրերում, որոնք ուղղված են աղքատության կրճատմանը, ինչպես նաև ջատագովում է, որ յուրաքանչյուր հողություն լինի ցանկալի, յուրաքանչյուր ծնունդ՝ անվտանգ, յուրաքանչյուր երիտասարդ գեղը լինի ՄԻՎ/ՉԻՎՀ-ից, և յուրաքանչյուր աղջիկ և կին արժանանա հարգալից և պատշաճ վերաբերմունքի: Իր աշխատանքներում հիմնադրամն առաջնորդվում է 1994 թ. Կահիրեում կայացած Բնակչության և զարգացման միջազգային համաժողովում ընդունված Գործողությունների ծրագրով: Համաժողովի մասնակիցները եկան ընդհանուր

եզրակացության, որ կանանց իրավունքների ընդլայնումը, գենդերային հավասարության ապահովումը, աղջիկների ու կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի վերացումը բնակչության և զարգացման ասպարեզում քաղաքականության հանգուցային հարցերն են: Այս տեսանկյունից են քննարկվում նաև 2000 թ. ընդունված Հազարամյակի զարգացման նպատակները, որոնցից յուրաքանչյուրն անմիջականորեն առնչվում է ՄԱԲՀ-ի առաքելության հետ: Առանց կանանց նկատմամբ խտրականությունը վերացնելու և կանանց համար հավասար սոցիալական, տնտեսական, մշակութային և քաղաքական իրավունքներ ապահովելու աշխարհը անվազն մի քանի սերունդ էլ չի կարողանա ազատվել աղքատությունից՝ պնդում են կազմակերպության փորձագետները: ՄԱԲՀ-ի հայաստանյան գրասենյակը հիմնադրվել է 1999-ի փետրվարին, չնայած կազ-

մակերպությունը սկսել է աջակցել երկրին 1995 թվականից՝ ազգային վերարտադրողական առողջության ծրագրի շրջանակներում:

- Ներկայումս իրականացվող ծրագրերը.
- սեռական և վերարտադրողական առողջության ամրապնդում
- բնակչության և զարգացման ռազմավարություն
- երիտասարդների համար վերարտադրողական առողջության նախաձեռնություն Հարավային Կովկասում
- ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում

ՄԱԲՀ-ի գրասենյակի հասցեն՝ Պ.Աղամյան 14, ՄԱԿ-ի շենք Երևան 0010, Հայաստան էլ. փոստ՝ hayrapetyan@unfpa.org Կայք՝ <http://unfpa.org.tr/armenia/index.htm>

Թվերից այն կողմ

Կանխել մայրական և մանկական մահացությունը

Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ այս տարի առաջին եռամսյակում գրանցվել է մինչև մեկ տարեկան երեխաների 117 մահվան դեպք, ինչը 28,6 տոկոսով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ: Ինչպես մանրամասնեց մարդահամարի և ժողովրդագրական բաժնի պետ Կարինե Կույունջյանը, անցյալ տարի գրանցվել է մինչև մեկ տարեկան երեխաների 444 մահվան դեպք՝ 2007-ի 433 դեպքի համեմատ: 4. Կույունջյանի խոսքով՝ այս տարվա առաջին եռամսյակում հղիության հետ կապված բարդությունների պատճառով գրանցվել է մայրական մահացության (ծննդյան և հետծննդյան ժամանակահատվածում) 2 դեպք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 4 դեպքի համեմատ: Անցյալ տարի գրանցվել է մայրական մահացության 11 դեպք՝ 2007 թվականի 6-ի համեմատ: ՄԱԲԳ-ը այս առումով զգուշացնում է՝ ճգնաժամի պայմաններում մայրական առողջության ուղղվող միջոցների կրճատումը կարող է ի չիք դարձնել նախորդ տարիների նվաճումները:

Անլուծված արդեն խնդիր չէ՞

Օժանդակ վերարտադրողական տեխնոլոգիաներն ամեն տարի ողջ աշխարհում օգնում են 246 հազար փոքրիկների լույս աշխարհ գալուն, հաղորդում են ամերիկյան Human Reproduction հանդեսի հետազոտողները: Արհեստական բեղմնավորման գործողությունների հաճախականությունն անշեղորեն աճում է. միայն վերջին երկու տարվա ընթացքում դրանց ցուցանիշներն աճել են ավելի քան 25%-ով: Նշենք, որ անատոլոգիայի խնդիրը հրատապ է նաև Հայաստանի վերարտադրողական տարիքի բնակչության 30%-ի համար: ՄԱԲԳ-ի հայաստանյան գրասենյակի ծրագրերի շրջանակներում 2300 ընտանիքների շրջանում անցկացվել է ամուսնային պատճառների հետազոտություն, և հարցման բոլոր մասնակիցները պատճառը ճշտելու ամենաբարձր կլինիկական հետազոտության հնարավորություն են ստացել:

Յուրաքանչյուր սերնդում 10 միլիոն կին է մահանում հղիության ու ծննդաբերության ժամանակ



«Ամեն օր, ամեն րոպե մեկ կին է մահանում հղիության ու ծննդաբերության ժամանակ: Սա յուրաքանչյուր սերնդում կազմում է 10 միլիոն: Մայրական մահացության դեպքերի մեծ

մասն ընկնում է զարգացող երկրներին, ու դրանց մեծ մասը հնարավոր էր կանխել»,- այս արասփելի թվերը ներկայացվեցին ՄԱԲԳ-ի ծննդաբերության ժամանակ ու հղիության ընթացքում կանանց մահացության նվազմանը նվիրված միջազգային համաժողովում (Լոնդոն, 2007): 2000 թ. Հազարամյակի զագաթնաժողովում համաշխարհային առաջնորդներն իրենց առջև նպատակ դրեցին ապահովել վերարտադրողական առողջության մատչելիությունը կրճատելով մինչև 2015 թվականը 3/4-ով մայրական մահացության մակարդակը և 2/3-ով մանկականը: Ինչը տարի անց աշխարհի բազմաթիվ երկրներ նախկինի պես հեռու են առաջադրված նպատակներին հասնելուց:

Ճգնաժամը կանցնի, երեխաները կմնան



Լուսանկարը՝ ՄԱԲԳ-ի հայաստանյան ներկայացուցչության

Վերջին երկու տասնամյակներում Հայաստանում ժողովրդագրական իրավիճակը փոթազեղումներ է ապրում: Միգրացիոն պրոցեսների զարգացումը, սրտամոթային, ուռուցքային, էնդոկրին հիվանդությունների, սուրբերկուլոզի աճի դինամիկան, ծնելիության կտրուկ նվազումը... Բարդվելով իրար վրա՝ նրանք բոլորն էլ անհետաձգելի լուծումներ են պահանջում:

Այս շարքում կարևորագույնը առաջին տեղում ծննդաբերությունն է: Չակահարեմ անվճար լինելով՝ այն փաստորեն երիտասարդ ընտանիքների դատապարտում էր ահավոր մեծ ծախսերի: Մինչև վերջին ժամանակները մեկ երեխայի ծնունդը ծնողների վրա նստում էր 500-600 դոլար, ու սա դեռ չհաշված մյուս հաջորդող ծախսերը: Ուստի ամուսնական զույգերի մեծ մասը ծեռնապահ էր մնում երեխա ունենալուց՝ լավագույն դեպքերում խիզախելով միայն մեկ երեխա ունենալ: Պետությունն էլ իր հերթին էր կորուստներ կրում: Մի կողմից՝ ծննդաբերությանը հատկացվող կապիտալ ֆինանսական հոսքերը մնում էին սովորական հատվածում՝ մուտք չգործելով պետական գանձարան, մյուս կողմից՝ ծնելիության անկումը հանգեցնում էր բնակչության թվաքանակի կրճատմանը ու նրա արդեն բավական զգալի ծեղանցմանը, ինչը սպառնում էր բազմաթիվ բացասական հետևանքներով, այդ թվում նաև՝ պետության պաշտպանական հզորության քայքայման, աշխատողների ու կենսաբազմազանության անբարենպաստ հարաբերակցությանը:

Իրավիճակը խորանում էր նաև նրանով, որ երկրում արդյունքների թիվը չէր նվազում: Նույնիսկ երեխա չունեցող կանայք դիմում էին հղիության արհեստական ընդհատմանը՝ դրա համար չունենալով ոչ մի բժշկական ցուցում, հիմնականում՝ նյութական վիճակի պատճառով: Պերինատալոգիայի, մանկաբարձության և զինվորական ինստիտուտի տնօրեն, երկրի գլխավոր մանկաբարձ-

«Այրիլին ամուսինս ճգնաժամի պատճառով ընկավ կրճատման տակ: Այդ ժամանակ ես արդեն երկու ամսվա հղի էի, իսկ տանը դեռ երկու երեխա ունեցեցի 3 ու 5 տարեկան: Առաջ ես ոչ մի րոպե չէի կասկածի, արդու կանցի: Իսկ հիմա գիտեմ՝ ծննդաբերությունը ծախսերի հետ կապված չէ, երրորդ երեխա ծնվելուց հետո էլ մենք միանվագ խոշոր նպաստ կստանանք, այնպես որ՝ կդիմանանք: Ճգնաժամն էլ այդ ընթացքում կանցնի, մենք կունենանք երեք երեխա, իսկ պետությունը՝ երեք փոքրիկ քաղաքացի: Այնպես որ, անպայման երեխա կերեմ, ու ոչ մի ճգնաժամ ինձ համար արգելք չէ»,- պատմում է 30-ամյա Ազնիվ Թորոսյանը:

զինվոր, ԳԱԱ թղթակից անդամ Ռազմիկ Աբրահամյանի վկայությամբ՝ վերջին 15 տարիներին, չնայած ծեռնարկված մի շարք միջոցներին, արդյունքների թիվը մնում էր անփոփոխ՝ տարվա ընթացքում 11-11,5 հազար, ինչը Հայաստանի համար համարվում է բարձր ցուցանիշ:

Բժիշկների գնահատմամբ՝ ժողովրդագրության մեջ իր զգալի բացասական ներդրումն ունի հարաճուն ամուսնությունը, ընդ որում ոչ միայն կանանց, այլև տղամարդկանց: Եթե նախկինում այդ հարաբերակցությունը կազմում էր մոտավորապես 80%-ը 20%-ին, ապա այսօր մենք զգալիորեն մոտենում ենք հավասարակշռությանը:

Այս երևույթի պատճառները բժիշկները կապում են նախաամառը նրա հետ, որ վերարտադրողական տարիքի են հասել նրանք, ովքեր վերապրել են երկրաշարժի ու դրան հաջորդած ծանր տարիների սարսափները: Առաջնային ամուսնությունը հետևանք է վատ էկոլոգիայի, վատ սնվելու, մինչև վերջ չբուժված ինֆեկցիոն հիվանդությունների: Այսօր հանրապետության որոշ բժշկական կենտրոններում հաջողությամբ պայքարում են անպտուղության դեմ, ընդ որում՝ գործարդվում են համաշխարհային արևմտիկայում քննություն բռնած ամենաառաջադիմական մեթոդիկաներ: Սակայն անպտուղությունը առայժմ մնում է մեր ժողովրդագրությունը խարխիլող պատճառներից:

Հայաստանում, որտեղ երեխայի պաշտամունքը ամսասան ավանդույթ է, այսօր շատ քիչ են բազմազավակ ընտանիքները: Այսպես, 2007-ի երեք զավակ ունեցող ընտանիքը 4 հազար ընտանիք, իսկ չորս ընդամենը 700:

Պետությունը գիտակցելով, որ ծնելիության նվազումը կապված է նախաամառը սոցիալական գործոնի հետ, փորձեց լուծել այն մի քանի ուղղություններով: Դրանցից մեկը՝ երեխաներ ունենալիս միանվագ նպաստների չափերի զգալի ավելա-

ցումն է: Այսպես, առաջին ու երկրորդ երեխան ծնվելիս ընտանիքն ստանում է 50 հազար դրամ, երրորդի ու հաջորդող երեխաների դեպքում՝ 430 հազար դրամ:

Անցյալ տարվա հուլիսի 1-ից կառավարության որոշման համաձայն սկիզբ առավ ծննդյան սերտիֆիկատի համակարգը, որը բոլոր ծննդկաններին անվճար ծառայություններ ստանալու երաշխիքներ տվեց թե կրճատված չլինի և թե ծննդատանը: Այս նպատակների համար առողջապահության բյուջեից հասցեական հատկացվեց 1 մլրդ դրամ: Սա հնարավորություն տվեց բարձրացնել վիրաբույժ-գինեկոլոգների աշխատավարձը մինչև 600-700 հազար դրամ, զինվորագ-մանկաբարձներինը՝ մինչև 135-300 հազար դրամ, այսինքն՝ 3-4 անգամ:

Այս ծրագիրն աշխատեց այն պարզ պատճառով, որ, ի տարբերություն մյուսների, դրա համար ստեղծվել էր իրական ֆինանսական բազա, որը հնարավորություն տվեց առավելագույն մոտեցնել ծննդաբերության արժեքը իրական ծախսերին:

Առաջին իսկ օրից նախարարությունում գործում է շուրջօրյա թե՛ գիծ, որը հնարավորություն էր տալիս միշտ ձեռքը բազմազավակ վրա պահել: Հեռախոսազանգերը ստացվում էին նվազող կարգով: Այսպես, եթե անցյալ տարվա հուլիսին 130 զանգից 50-ը պարունակում էին բողոքներ տարբեր խախտումների առնչությամբ, ապա այսօր ամսվա ընթացքում ստացվում է 1-2 հեռախոսազանգ, այն էլ՝ ընդամենը խնդրանք՝ պատասխանել այս կամ այն հարցին: Այն, որ ծրագիրը գործում է, վկայում է նաև մեկ այլ փաստ: Այսպես, եթե անցյալ տարվա առաջին եռամսյակում լույս աշխարհ էր եկել 9425 երեխա, ապա այս տարվա նույն ժամանակահատվածում՝ 9955: Բժիշկները կանխատեսում են, որ տարվա կտրվածքով այս ավելցուկը կարող է գերազանցել 2 հազարը, ինչը, անկասկած, կլինի թող որ ոչ հզոր, սակայն զգալի ժողովրդագրական ճեղքում:

Համաշխարհային ճգնաժամը, որ ուժեղ հարված էր նաև Հայաստանի առողջապահությանը, ստիպել է կառավարությանը կրճատել բյուջեային ֆինանսավորումը՝ 22%-ից դարձնելով 7%: Սակայն դրա հետ մեկտեղ որոշվել է, որ դեղամիջոցների գնումներին ու ծննդաբերության գանձարանի լրացուցիչ միջոցները կհատկացվեն առաջին հերթին:

Առողջապահության նախարար Դարություն Քուչկյանի խոսքով՝ բնակչությունը հավատաց այս ծրագրին, կանայք համոզվեցին, որ ծննդյան սերտիֆիկատը ֆիկցիա չէ, այլ պետության կողմից երաշխավորված անվճար ծննդաբերության իրավունք: Ուստի ոչ մի դեպքում չպետք է թույլ տալ, որ այդ վստահությունը սասանվի: Ցանկացած պայմաններում, այդ թվում նաև ճգնաժամի, պետք է շարունակել սկսածը, միայն այսպես է հնարավոր ապահովել մեր երկրում ծնելիության աճը:

Առողջապահության նախարարության տվյալներով՝ Հայաստանի կոնսուլտացիաներում հաշվառման կանգնած կանանց թիվը կազմել է 16237: 2009-ի հունվարին՝ 2008-ի հունվարի համեմատությամբ, հղի կանանց թիվն աճել է 2761-ով: Հույս ունենանք, որ այս աճը կպահպանվի:

Վալերիա Զախարյան

Ի դեպ

«Հիփոթեքային» երեխաներ

Վերջերս հայտնի դարձավ, որ Հայաստանի կառավարությունում մշակվում է մի ծրագիր, որը կօգնի կանցի կոչելու երիտասարդ ընտանիքներին մատչելի բնակարանով ապահովելու նախագահի նախընտրական խոստումը: Ենթադրվում է, որ

հիփոթեքային վարկերը երիտասարդ ընտանիքներին տրամադրվելու են արտոնյալ պայմաններով: Ընդ որում, արտոնությունները զգալիորեն կաճեն երեխաների թվի հետ: Ի դեպ, այս գաղափարը, անշուշտ, կնպաստի ծնելիության բարձրացմանը:

Աշխատավարձ երեխայի խնամքի և դաստիարակության համար

Ուսաստանում մշակվում է մի օրինակ, որի համաձայն բազմազավակ մայրերին աշխատավարձ կվճարվի երեխաներին դաստիարակելու համար: Ընդ որում՝ «մայրիկ» ստանազիտությամբ կանանց համար կպահպանվեն բոլոր պետական տ-

ցիալական երաշխիքները՝ հղիության ընթացքում վճարվումներ, երեխայի նպաստ, մայրական կապիտալ: Նախագիծ մշակողները հայտարարում են. որ այս միջոցառումը տևեստապես շահավետ կլինի թե՛ երեխաների ծնողների և թե՛ պետության համար:

Փորձագետի անկյուն

«Նայ կնոջ համար այնքան էլ էական չէ՝ ճգնաժամ է, թե՛ ոչ: Նա անընդհատ պայքարում է»

Եվրոպացի հոգեբանների կատարած ուսումնասիրության համաձայն՝ կանայք ավելի կալ ու հավասարակշռված են կարողանում դիմակայել ճգնաժամի դժվարություններին, քան տղամարդիկ: Նրանց դիտարկումներով՝ ճգնաժամից առաջացած ֆինանսական դժվարությունների հետևանքով հսկայական թիվ են կազմում ինքնասպանությունները, ընդ որում՝ տղամարդկանց: Մասնագետները կանանց դիմացկունությունը վերագրում են նրան, որ ծննդաբերությունից հետո կանայք հոգեբանորեն պատրաստ են ավելի ծանր փորձությունների: Իսկ ինչպե՞ս է կարողանում դիմակայել դժվարություններին հայ կինը: Այս հարցով դիմեցինք հոգեբան Ռուբեն Պողոսյանին:

«Ճգնաժամը, ֆինանսական խնդիրները հայ կնոջ համար, ցավոք, նորություն չեն: Այն գուցե նորություն է եվրոպացու համար: Հայ կինը վերջին 20 տարվա ընթացքում բազմիցս զգացել է ճգնաժամի ազդեցությունը: Ավելին՝ կինն այս տարիների ընթացքում երբևէ իր հույսը չի դրել տղամարդու վրա: 90-ականների կանայք գուցե ավստակելու և ընտանիք պահելու համար անգամ մեկնում էին արտասահման: Էական չէ, թե ինչ ճանապարհներով էին գտնում վստահություն, գլխավորը նրանց ցանկությունն էր՝ սովից փրկել ընտանիքը»,- նկատում է հոգեբանը:

Ռուբեն Պողոսյանը համակարծիք է եվրոպացի հոգեբանների այն տեսակետին, որ կանայք ծննդաբերությունից հետո դառնում են ավելի

համարձակ և ինքնավստահ: «Կանայք բնագործ են պայքարում երեխայի գոյության համար, ծեռք բերում փորձառություն, հետևաբար կարող են տեղափոխել այդ փորձը այլ սոցիալական դաշտ»: Ինչ վերաբերում է ինքնասպանություններին՝ հոգեբանը փաստում է, որ հայ իրականության մեջ էլ տղամարդիկ դեպրեսիա ապրելու ավելի մեծ հավակնություն ունեն, քան կանայք: «Երբ կորցնում են աշխատանքը, կարծես տղամարդկությունն էլ են կորցնում»: Նրա խոսքով՝ տղամարդը խոր դեպրեսիայի մեջ է ընկնում, երբ չի կարողանում ֆինանսապես ապահովել ընտանիքի բարեկեցությունը և դրանով իսկ համապատասխան հասարակության կողմից տղամարդուն ներկայացվող պահանջներին:

Ջրուզեգ Դասմիկ Դարությունյան

Օգնության ձեռքը

Միացե՛ք «Օրորոցին», սափա՛ր կանգնեք մեր փոքրիկ քաղաքացիներին

Ամեն տարի Հայաստանում ծնվող մոտ 30-40 հազար երեխաներից առնվազն 5000-ի ընտանիքները չունեն իրենց նորածնի խնամքի համար անհրաժեշտ անենատարական պարագաները: Համազգային հոգածություն նորածններին. «Օրորոց» ծրագիրը, որը գործում է 2002-ից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հովանու ներքո, արդեն օգնել է փոքր-ինչ մեղմելու այդ դժվարությունը սահմանամերձ գյուղերի 1400 սոցիալապես անապահով ընտանիքներին՝ նրանց տրամադրելով հագուստ, սնունդ, հիգիենայի պարագաներ և մինչև մեկ տարեկան երեխային անհրաժեշտ այլ պիտույքներ: Սակայն համաշխարհային ֆինանսական ճգնաժամն իր անմիջական ազդեցությունն ունեցավ ծրագրի վրա. արդյունքում մեկ տարի է ինչ ծրագիրն ընդհատել է իր գործունեությունը՝ այսպիսով զրկելով առանց այն էլ անապահով կանանց օգնության այս փոքրիկ հնարավորությունից: Համաշխարհային կրթությանը կանանց ասոցիացիայի նախագահ և «Օրորոց» ծրագրի համակարգող խորհրդի ղեկավար Ջեմմա Հասթինգսի հետ մեր գրույցը այս նախաձեռնությունը շարունակելու անհրաժեշտության մասին է:



Լուսանկարը՝ «Օրորոց» ծրագրի

Գումարի չափն էլ էական չէ, կարևորը միմյանց օգնելու, ձեռք մեկնելու ցանկությունն է: Կարծում եմ՝ կարևոր համագանձը է նաև այն, որ ծրագրի շրջանակներում բոլորն աշխատում էին կամավոր սկզբունքով, առանց որևէ վարձատրության:

Ձրուցեց Կարինե Պետրոսյանը

Յուրաքանչյուր ժողովրդի համար գթասրտությունը ազգային արժեք է: Ուզո՞ւմ եք երկիրը շենսանա, ուզո՞ւմ եք երկիրը պաշտպանող վաղվա զինվորը ծնվի, որ վաղվա դերասանն ու մարզիկը լինեն, վաղվա գործը ու նկարիչը: Եկե՛ք այսօր ամբողջ ազգով և սրտով օգնենք, սատար կանգնենք մեր փոքրիկ և ապագա քաղաքացիներին:

Ծրագրի աջակցումը համար HSBS Bank Armenia, djsc 9 V. Sargsian Str. Yerevan, RA Acc.N001-002195-103 (USD) Acc.N 001-002195-002 (AMD) Hayastan All-Armenian Fund «Ororots» Project

- Յոթ տարի առաջ նախաձեռնելով «Օրորոց» ծրագիրը կանանց հասարակական կազմակերպությունները նպատակ ունեին համաժողովրդական ուշադրությանը շրջապատել սոցիալապես անապահով նորածններին և հղի կանանց և դրանով իսկ օգնել խթանելու մեր երկրում ծնելիությունը: Եվ չնայած վերջին տարիներին այն փոքր-ինչ ավելացել է, խնդիրը, ցավոք, չի կորցրել իր այժմեականությունը, քանի որ բնակչության հասարակ վերարտադրությունը մեզանում անապահովված չէ: Առավել ևս ճգնաժամի պայմաններում, երբ հասարակությունում առկա բոլոր ցավոտ խնդիրները սրվում են՝ առաջին հերթին բարդվելով աղքատ ընտանիքների ուսերին: Հիշեցնեն, որ 90-ական թվականների ճգնաժամի հետևանքով էր, որ ծնելիությունը կրկնակի կրճատվեց մեր հանրապետությունում:

- Ինչպե՞ս էիք ընտրում ընտանիքները, և ի՞նչ օգնություն էր ցույց տրվում նրանց: Ընտրվեցին սահմանամերձ շրջանները, իսկ կողմնորոշվելու օգնեցին աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նեմրոթ» տեղեկատվավերլուծական կենտրոնի տվյալները, որոնց միջոցով գնահատվում է կարիքավորության աստիճանը: Դրանց հիման վրա է տրամադրվել օգնությունը 3 ամսականից մինչև մեկ տարեկան նորածններին, և, պետք է ասեն, նրանց ընտանիքներին:

Հանրային խորհուրդ



Հայաստանի Հանրապետության նախագահին կից Հանրային խորհուրդը, որի մասին այդքան երկար խոսում էին, արդեն ձևավորվել է: Հաստատվել է նաև նրա կազմը:

մը: Խորհրդում 12 հանձնաժողովներ կան, ու դրանցից մեկը կզբաղվի գեներային ու ժողովրդագրական հիմնահարցերով: Մենք դիմեցինք այդ հանձնաժողովի նորընտիր նախագահ, Գյումրու մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու և գեներային հարցերով փորձագետ Ելենա Վարդանյանին՝ խնդրելով պատասխանել այն հարցին, թե նա ինչպե՞ս է պատկերացնում իր գործունեությունը պատմական ժողովրդագրության, որտեղ պետք է «գոյակցեն» գեներային հավասարությունն ու ժողովրդագրությունը: Զե՛ր որ տարածված պատկերացումների համաձայն՝ մեկը մյուսին կարծես թե խանգարում են:

- Ես այդ կարծիքին կողմնակից չեմ, չնայած շատերի մոտ տարակուսանք է առաջացնում գեներային ու ժողովրդագրական հիմնախնդիրների միացումը: Այդ առումով հիշեցնեն, որ ժողովրդագրական հիմնախնդիրներն ունեն գեներային բովանդակություն, և դրանց լուծման մեջ գեներային մոտեցումը ուղղակի պահանջված է:

հանջված է: Դա ամենակին էլ չենթադրում, որ այս երկու հիմնահարցերը կարող են միմյանց փոխարինել, կամ առավել ևս, ինչպես դուք նշեցիք, միմյանց խանգարել, խոսքը կարող է ու պետք է լինի միայն փոխլրացման մասին: Թե՛ գեներային, թե՛ ժողովրդագրական քաղաքականության մեջ կարևորվում են վերարտադրության, զբաղվածության, արտադարձի, ընտանիքի, առողջության և բնակչության հետ կապված այլ հիմնահարցեր: Կարծում եմ՝ Հանրային խորհրդի ձևաչափը կապահովի այս հիմնախնդիրների հավասարազոր քննարկման ու ներկայացման հնարավորությունը: Ընդհանուր առմամբ, Հանրային խորհրդում գեներային հարցերի հանձնաժողովի ձևավորման որոշումը զուցե ուսման համար անսպասելի էր, սակայն իմ կարծիքով՝ ճիշտ ժամանակին էր: Կարծում եմ՝ նախաձեռնությունը պայմանավորված էր ոչ միայն այդ ուղղությամբ միջազգային պարտավորությունների կատարման ձգտումով, այլև հասարակական կյանքի ժողովրդավարական սկզբունքների կատարելագործման ցանկությամբ:

ված չէ նաև հասարակական հատվածում: Հանրային խորհրդի հանձնաժողովների անդամների առաջադրումն դրա վրա ապացույց է հանդիսանում: Այսպես, հասարակական կազմակերպությունների կողմից առաջադրված 1550 թեկնածուներից միայն 494-ն են կին, իսկ խորհրդի 36 անդամների կազմում ընդամենը 5 կին կա, որոնցից երեքին, ի դեպ, առաջադրել է նախագահը:

Ճգնաժամի դեմքը

Աշխարհում ավելի քան 1 մլրդ մարդ քաղցած է

Մարդկության մեկ վեցերորդը (1,02 մլրդ մարդ) հնարավորություն չունի պարենից օգտվելու, և 2009-ին քաղցած մարդկանց թիվը կաճի 11%-ով. սրանք ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության վերջին տվյալներն են:

Հարուստներն էլ են լաց լինում

2008-ին աշխարհում միլիոնատերերի թիվը կրճատվել 15%-ով, իսկ նրանց ընդհանուր կապիտալը նվազել 20 տոկոսով՝ 40,7 տրիլիոն դոլարից մինչև 32,8: Հետազոտողներն աշխարհում հաշվել են 8,6 մլն մարդ, որոնց կարողությունը գերազանցում է 1 միլիոն դոլարը:

2009-ին աշխարհում 22 մլն կին կկորցնի աշխատանքը

Աշխատանքի միջազգային կազմակերպությունը կանանց շրջանում զբաղվածության համաշխարհային միտումների մասին իր ամենամյա զեկույցում հաղորդում է, որ այս տարի աշխատանքից կարող է զրկվել 22 մլն կին: Փորձագետները կանխատեսում են, որ 2009-ին կանանց շրջանում գործազրկությունը կհասնի ռեկորդային մակարդակի 7,4%: Տղամարդկանց շրջանում այն ավելի ցածր կլինի 7%: ՄԱԿ-ը մտավախություն ունի, որ 2009-ին ճգնաժամն առանց աշխատանքի կորցնի 39-59 մլն մարդ: ԱՊՀ երկրներում և Հարավարևելյան Եվրոպայում գործազրկության մակարդակը կաճի 35%-ով:

Համաշխարհային ճգնաժամը սպառնում է մայրական առողջությանը

ՄԱԲՀ-ը կանխատեսում է, որ սոցիալական ոլորտին եւ առողջապահությանը հատկացվող միջոցների յուրաքանչյուր 10 մլն ԱՄՆ դոլար պակասի դիմաց տեղի կունենան հավելյալ 1,8 մլն ոչ-անվտանգ արիեստական վիճակումներ (աբորտ) և 19 000-ով ավելի մայրերի մահեր: Հետազոտողների գնահատմամբ, ընտանիքի զարգացման եւ պլանավորման միջոցների համընդհանուր հասանելիությունը կարող է ամեն տարի փրկել մոտ 175 000 կնոջ կյանք: Ծնունդների միջև ընկած ժամանակահատվածի մեծացումը մինչև երեք տարի նույնպես կարող է կանխել մինչև 5 տարեկան 1,8 մլն երեխայի մահ:

Հայաստանում աղքատության մակարդակը կարող է աճել 4-6%-ով

Դա նշանակում է, որ ճգնաժամը ծայրահեղ աղքատության ճիգանների մեջ կներքաշի 172 հազար մարդու էլ: Այսպիսով՝ Հայաստանում կլինեն 906 հազար աղքատներ, որոնցից 297 հազարը՝ ծայրահեղ, կանխատեսում է Համաշխարհային բանկը:



Սեզոնային աշխատողների կեսը մնացել է տանը

Ամեն տարի Հայաստանից սեզոնային աշխատանքների մեկնող 60-70 հազարի կեսից ավելին այս տարի մնացել է տանը, - ուն է ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիայի գործակալության պետ Գագիկ Եգանյանը: Նրա գնահատականներով՝ դա անուշտ կարծրացման լարվածությունը հայաստանյան աշխատուշակայուն: Նա նաև նշեց 40 տոկոսով մասնավոր փոխանցումների ծավալների զգալի նվազումը, որոնք, հիմնականում, ստացվում էին Ռուսաստանից: Նշենք, որ վերջին 5 տարում Հայաստան մտնող տրանսֆերտների մակարդակն ամեն տարի աճում էր 25%-ով:

Գործազրկություն՝ պաշտոնական ու իրական

«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով՝ 2009 թ. հունիսի 1-ի դրությամբ հանրապետությունում գործազուրկների թվաքանակը կազմում է 83,9 հազար: Այս ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 9,8%-ով (76,4 հազ. մարդ), իսկ տարեկան նկատմամբ՝ 10,9%-ով (75,7 հազ. մարդ): Գործազուրկների թվաքանակում կանանց տեսակարար կշիռը տարեկան համեմատ շարունակում է նվազել՝ 75,5%-ից դառնալով 71,3%: Այս նվազեցումը պայմանավորված է գործազուրկի կարգավիճակի ստացման տղամարդկանց թվաքանակի աճով: Հունիսի 1-ի տվյալներով Հայաստանում աշխատուժի պաշտոնական պահանջարկը նվազել է անցյալ տարվա համեմատությամբ 10%-ով, ինչը նշանակում է, որ աճել է 1 թափուր տեղի համար հավակնորդների թիվը: Նշենք, որ Զբաղվածության պետական ծառայության այս տվյալները արտացոլում են միայն գրանցված գործազուրկների թիվը: Իրական գործազրկության մակարդակը, նախընտրական հետազոտությունների գնահատականներով՝ 20%-ով բարձր է:



Առանց մեկնաբանության

Որոշումների ընդունման մակարդակում գեներային անհավասարակշռությունը, որի մասին սովորաբար խոսում են որպես քաղաքական կյանքի բնորոշ հիմնախնդիր, պարզվում է՝ պակաս արտահայտված չէ նաև հասարակական հատվածում:

Կանանց «գործը»

«Նվաճե՛նք նոր շուկաներ»

Այս կարգախոսն էին ընտրել մեր կին ձեռնարկատերերը ֆինանսատնտեսական ճգնաժամը հաղթահարելու համար:

Ի պատիվ նրանց՝ սեփական գործը հիմնած 100-ից ավելի կանանցից ոչ մեկի ոչ մի ձեռնարկությունը ոչ միայն չի փակվել, այլև գործերը նոր քափ են առնում: Հայաստանի գործարար կանանց ասոցիացիայի կողմից անցկացված հարցազրույցի արդյունքները հետևյալն են:



Ինչ, որ ինչ-ինչ, բայց կոստեթիկ միջոցների հարցում կանայք իրենց չէին զրկի: Սակայն սխալվեցինք,- ասում է Ջուլիետա Դանիելյանը: - Եթե առաջ մագերես ամեն ամիս էին ներկում, ապա այսօր մերկ են գնում երկու ամիսը մեկ: Ու սա այն դեպքում, երբ մեր արտադրանքը միշտ համեմատաբար էժան է եղել: Գները չենք բարձրացրել նաև հիմա, ավելի ցածրացրել էլ չենք կարող հունքը ներմուծում ենք Եվրոպայից, վաճառում Հայաստանի գներով:

Շուկայում խուսաճվելով ֆիրմայի ղեկավարությունը կարողանում է ոչ միայն չկրճատել 30 աշխատակիցներից ոչ մեկին, այլև նույնը բողոքել աշխատավարձերը: Բացառություն են միայն ղեկավար կազմի աշխատավարձերը՝ վարչակազմը վեհաձեռնորեն գնաց իր դրույքների 40% կրճատման: Իսկ եղել են ժամանակներ, երբ «Նիկան» կոսմետիկայի շուկայում փաստորեն միակն էր: Եվ ոչ միայն Հայաստանում. մեքենաներով Մոսկվա էր ուղարկվում այն ժամանակ գանգրեցման համար խիստ ղեֆիցիտ համարվող «Լոկոն» միջոցը: Իսկ այսօր ամեն կարգի արտասահմանյան միջոցներով հեղելված է ոչ միայն ռուսաստանյան, այլև տեղական շուկան:

«Մի անգամ խանութում իմ ներկայությամբ մի կին խնդրեց վաճառել մեր ներկը այն մոսկովյան կոչելով,- պատմում է իմ գրույցակիցը: - Ես բարկացա. սա հայկական ներկ է: Կինը շարունակում էր պնդել: Երբ ես ներկայացա ու հայտարարեցի, որ բոլոր 27 գույներն էլ մեր մասնագետների ձեռքի գործն են, նա այդ ներկը չգնեց: Իսկ վաճառողուհին էլ ինձ կշտամբեց իզուր ճիշտ ասացի: Ինձ համար ահավոր վիրավորական է, երբ շուկայում ասրսափելի դեֆիցիտ է, «Նիկան» փայլում էր, ու այն ժամանակ ոչ ոք նրան մոսկովյան «գրանցում» չէր վերագրում: Ուրեմն ինչո՞ւ են այսօր որակյալ ապրանքի արտասահմանյան կարգավիճակ տալիս: Մեզ մոտ աշխատող 30 կանանցից 6-ը գիտության թեկնածու են: Մի՞թե մեր կանանց «ուղեղները» արտասահմանյաններից վատ են աշխատում: Ոչ մի դեպքում: Հիմա էլ մեր ողջ ուշադրությունը նվիրել ենք

շուկայի նվաճմանը, ուժեղացրել ենք մարքեթինգի աշխատանքը: Հաճախորդների թիվն ավելացավ: Ու թեպետ սա մեր երազանքների վերին սահմանը չէ, կարծում ենք մենք կրիմակայենք: Այնպես, ինչպես դիմակայեցինք ֆիրմայի կայացման արշավույթին: Ուղղակի պետք է, պարտավոր ենք հաղթահարել այսօր»:

«Եվրոդեմո». Ատամնաբուժական զբոսաշրջությունը նոր «տեխնոլոգիա» է

Իրավիճակին լավատեսորեն է նայում նաև «Եվրոդեմո» ատամնաբուժական կենտրոնի գործադիր տնօրեն Արդա Գրիգորյանը: Ի տարբերություն կոսմետիկայի բիզնեսի ստույգադրական ամբողջությամբ պահանջված է: Մարդիկ խնայում են գեղեցկության վրա, սակայն ոչ առողջության: «Մյուս կողմից մենք էլ խնդիրներ ունենք: Ատամնաբուժությունը շարունակ ներդրումներ է պահանջում,- բացատրում է Գրիգորյանը: - Բառացիորեն ամենուրեք պահանջվում են ներդրումներ՝ նոր պատրաստուկներից, տեխնոլոգիաներից մինչև նոր բազկաթոռներ»:

Ֆինանսական փորձանքը հաղթահարելու համար «Եվրոդեմո» կայք է հաստատել Եվրոպայում: Ֆիրման բացառիկ պայմանագիր է կնքել Եվրոպական երկրներից մեկի հետ՝ փոխապատվաստման ինովացիոն ծրագիր կիրառելու համար, որը բնական պահանջարկ է վայելում: Այստեղ մշակել են նաև նոր «տեխնոլոգիա» ատամնաբուժական զբոսաշրջություն: «Սկզբնական շրջանում մեկ շաբաթով մեր երկիր կայցեին խմբեր Մոսկվայից, ովքեր ցանկանում են հարմար գներով իմպլանտներ ստանալ: «Տուրում» ընդգրկված են ոչ միայն «պրոթեզներ», այլև ուղևորություններ Հայաստանում: Մտահղացումը շահեկան է. ի տարբերություն մոսկովյան մեկ իմպլանտի համար, մեզ մոտ գներն անհամեմատ ցածր են»,- նշում է գրույցակիցը: Գործարարի տնօրենի ուղեղը շարունակ աշխատում է իրավիճակից դուրս գալու ելքեր մտածելու վրա՝ հնարավորություն ունենալով դիմանալ բազմաթիվ համանման

կլիմայի փոփոխությանը: Ի դեպ, ողջ «բանակից» երեքը՝ «Բելադեմո», «Արդեմո» և «Գոլդեմո», ղեկավարում են կանայք, ու դարձյալ՝ բավական հաջող:

«Դոմինանտ». Կառուցում, 90-ականների ավելի վատ ժամանակներ ենք տեսել

«Դոմինանտ» ֆիրմայի գործադիր տնօրեն Լիլյա Մարգարյանը հեռատեսության փայլուն օրինակ է: Գնաճառի պայմաններում կարողացել է ոչ միայն Սիսիանում իր հիմնած մի քանի արտադրություններում ոչ մի հաստիք չկրճատել, այլև աշխատանքի ընդունել գործազուրկներին: Համագործակցում է զբաղվածության հետ, ու վերջին շրջանում աշխատանքի է ընդունել մոտավորապես 70% այն կարգի մարդկանց, որոնց համար հատուկ դասընթացներ են կազմակերպվել: Թեպետ, անցյալ տարվա համեմատությամբ, Մարգարյանի հիմնած երկու ձեռնարկություններում (չինանյութերի և Եվրոդեմոյի ու պատուհանների արտադրության) պահանջարկը 30%-ով կրճատվել է, այնուամենայնիվ, գործարարը կարողացել է նոր արտադրություններ հիմնել: Ընդ որում՝ ճգնաժամային տարվա ընթացքում: Ի դեպ, «Դոմինանտ Ջերմուկ» հանրային ջուրը 10 դրամով էժան է մրցակից արտադրանքից: Մարգարյանը կարողացել է իջեցնել նաև Եվրոպատուհանների, դեմոյի ու շինանյութերի գները՝ 20% իջեցնելով մեր օրերում բավական էական է: Չէ՞ որ աշխատողների աշխատավարձերը մնում են նույնը: Այնուամենայնիվ, Մարգարյանը դիմել է դիմում: Սակայն ոչ հենց այնպես. վատա է, որ հենց հիմա պետք է յուրացնել նոր ոլորտներ: Եթե մեկը չհաջողվի, իրավիճակը կփոխվի մյուսը: Տեսնելի ապագայում Լիլյան մտադիր է կաթնաբուսաբույսի ֆերմա հիմնել՝ կողմնորոշվելով կաթի ներկայիս դեֆիցիտով:

«Կարծում ենք ճգնաժամին կհաղթենք: 90-ականների սկզբին ավելի վատ ժամանակներ էլ ենք տեսել և՛ քաղց, և՛ անելանելիություն այս բառի ամենաուղղակի իմաստով: Ներկայիս ֆինանսական ճգնաժամը միայն «բեկորներն» են այն ճգնաժամի, ինչին մենք արդեն բախվել ենք»,- ասում է ձեռնարկատերը:

Իրոք, ե՞րբ է մեր կինն ընկրկել: Ըստ էության ոչ մի տեղ թույլ սեռ լինելով՝ դիմապայել է շրջապատի մարդկանց հեզմանակալ վերաբերմունքի ճնշմանը՝ հիմնելով իր գործը: Կրիմակայի նաև հիմա, երբ «մեխանիզմը» գործարկված է: Բարեբախտաբար, մեր կանայք ստեղծագործական մոտեցման, հնայելու և գործնկերների հետ ընդհանուր լեզու գտնելու կարողության պակաս չունենան:

Ջրուցեց Ասյա Ծառուկովան

Ի դեպ

Հիշենք, ի՞նչ նվիրեց մոդային Մեծ ճգնաժամը: Կանացի տաքսոներ և, ըստ էության, դարերով տղամարդկանց պահարանի տարրեր համարվող հագուստ կրելու կանանց իրավունք:

Ո՞վ է մեղավոր

Կանայք կարող էին փրկել աշխարհը տնտեսական ճգնաժամից



Ճգնաժամի շրջանում ո՞վ է մեղավոր ու ի՞նչ անել հարցերի պատասխանները բազմաթիվ տարբերակներ են ենթադրում: Կանգ առնենք դրանցից երկուսի վրա:

1-ին տարբերակ՝ ճգնաժամի համար մեղավորը կանայք են

«Փնտրեք կնոջը» առաջարկը դասականներից է: «Այդ նրանք՝ կանայք են, սպառնալից են իրենց անզուսպ մղուճով մեղավոր ճգնաժամի համար»,- մոտավորապես այսպես էին ասում 30-ականներից՝ Մեծ ճգնաժամի տարիներին, և այսօր էլ գրեթե նույն խոսքերն են հնչում նրանց հասցեին: Սպառնալից մրցակցի գուտ «տղամարդկային» ոլորտներում էլ մեղավորը կանայք են, քանի որ տղամարդկանց գլխավոր առաջնորդ ուժը «կանանց վրա տալովորություն գործելն է»: Այստեղից ենթադրվում է, որ հիմնական հակաճգնաժամային միջոցն է չափավորել կանանց տնտեսական չափերի հասնող պահանջումը: Միաժամանակ՝ նվազագույնի հասցնել տղամարդկանց դրոյապատճառները:

2-րդ տարբերակ. մեղավորը տղամարդիկ են

Կարողանա՞ր արդյոք համաշխարհային տնտեսությունը խուսափել ֆինանսական ճգնաժամից, եթե Ուոլ Սթրիթում իշխանությունը հայտնվեր թույլ սեռի ներկայացուցիչների ձեռքին: Դավուսի համաշխարհային տնտեսական համաժողովի շատ մասնակիցներ համարում են, որ կանայք կարող էին փրկել ֆինանսական աշխարհը սպեկուլյատիվ մշակույթից, քանի որ «նրանք ավելի զգուշավոր են և չէին դիմի այն ռիսկերին, որոնք կործանեցին համակարգը», «ավելի պատասխանատու են» և, ընդհանրապես, «համաշխարհային ճգնաժամը սկսվեց, քանի որ իշխանության ղեկի մոտ շատ աչքեր, բաց քիչ կանայք էին կանգնած»: Նրանց խոսքով՝ ճգնաժամը սկսվեց ֆինանսական հատվածում, որի ղեկավարները հաճախ տղամարդիկ են: Այդ նրանք էին դիմում ռիսկային գործարքների, ֆոնդային բորսաներում զբաղվում սպեկուլյացիաներով ու բարձրացնում նավթի գները... Մի խոսքով՝ պատճառների փնտրտուքը հանգում է մի ընդհանուր խնդրի. պետությունների ղեկի մոտ չափից ավելի շատ տղամարդիկ են կանգնած, և եթե աշխարհն ավելի շատ ղեկավարվեր կանանց կողմից, ապա այն ավելի անվտանգ կլիներ... Փորձազետների կարծիքով՝ ճգնաժամը պետք է օգնի վերափոխատվորելու գլոբալ արժեքները՝ հավասարակշռելով, որ ճգնաժամը կփոխի ղեկավար պաշտոններում տղամարդկանց ու կանանց միջև հարաբերակցությունը հոգուտ վերջինների: Ու այս յուրօրինակ հակաճգնաժամային միջոցը արդեն դիտարկվում է բիզնեսում ու քաղաքականության մեջ թուփ-պաշտոնների համար կանանց դիրքերի ամրապնդման մեջ:

«Տղամարդիկ լավ չեն պատկերացնում, որ եթե նույնիսկ 500-1000 դրամով քիչ փող տան, կինը նորմալ շուկա չի կարա անի: Ամուսինս շինարարության վրա է աշխատում, մենք մեծ եկամուտներ չենք ունեցել, բայց ես քան վատ էլ չէինք ապրում, - ասում է 36-ամյա տնային տնտեսուհի Ալլան: - Հիմա ինձ օրը 1500 դրամ ա տալիս, ես դրանով ի՞նչ առնեմ: Միայն ամենատառաջնային սնունդն են առնում, որն անհրաժեշտություն է, բայց, օրինակ մի քիչ 2-3 օրը մեկ կարան առնեմ»:

«Բիռքիմ». «Մի՞թե մեր կանանց «ուղեղները» արտասահմանյաններից վատ են աշխատում

Ջրուցեցի նաև «Բիռքիմ» ֆիրմայի ղեկավարներից մեկի՝ Ջուլիետա Դանիելյանի հետ: Ֆիրման հայտնի է իր «Նիկան» ապրանքանիշով, և անցյալ տարի մեզ պատմել ենք նրա գործունեության մասին: Հետաքրքրության որոշ անկում դիտվել էր արդեն մինչև ճգնաժամի համատարած խորացումը: Իսկ հիմա խոսքը ընդհանրապես պահանջարկի 30% նվազման մասին է. այսօր հայ կանայք պարզապես կոսմետիկայի փող չունեն: «Մենք կարծում

Կարծիքների խաչմերուկ

Ճգնաժամը ջենտլմենն է

Այն կանանց էլ է հարվածել

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքներն ամենից առաջ զգում են այն կանայք, որոնք ամեն օր առնչվում են կենցաղային կարիքները հոգալու խնդրին.

«Տղամարդիկ լավ չեն պատկերացնում, որ եթե նույնիսկ 500-1000 դրամով քիչ փող տան, կինը նորմալ շուկա չի կարա անի: Ամուսինս շինարարության վրա է աշխատում, մենք մեծ եկամուտներ չենք ունեցել, բայց ես քան վատ էլ չէինք ապրում, - ասում է 36-ամյա տնային տնտեսուհի Ալլան: - Հիմա ինձ օրը 1500 դրամ ա տալիս, ես դրանով ի՞նչ առնեմ: Միայն ամենատառաջնային սնունդն են առնում, որն անհրաժեշտություն է, բայց, օրինակ մի քիչ 2-3 օրը մեկ կարան առնեմ»:

Ճգնաժամից տուժել են հատկապես արտասահմանից ֆինանսա-

վորվող ընտանիքները. «Ամուսինս Ալմա Աբայան տաքսու վարորդ է աշխատում, ես ամիս ինչ փող չի ուղարկել, անցած ամիս 350 դոլար ա ուղարկել, դրանով ենք մինչև հիմա յուրա գնում: Գնալով փողը պակասում ա, էնտեղ էլ են մարդիկ աղքատացել, էլ տաքսի չեն նստում»,- ասում է 41-ամյա Արմենուհին:

Իսկ 45-ամյա Լարիսան դստեր ուսման վարձը վճարելու համար ստիպված է կրճատել առօրյա ծախսերը. «Ամաչում էլ են ասել, բայց շաբաթվա 5 օրը մակարոն ու կարտոֆիլ ենք ուտում, աղջկաս վարձը 320 հազար ա, կեսը պիտի սեպտեմբերին մուծենք, էլ չգիտեմ՝ ինչի հաշվին խնայեմ, մնում ա, որ հաց էլ չուտենք: Ամուսինս Բելառուսից նոր ա եկել, հիմա գործ չունի»:

Ճգնաժամի բացասական ազդեցությունը հասցրել է ճաշակել

նաև ոսկու շուկայի վաճառողուհի Ալիսան. «Գնորդները պակասել են, տնօրենն աշխատավարձը կրճատել ա, առաջ ամիսը 80 հազար էի ստանում, հիմա 60 հազար: Կարող ա կրճատի, կես դրույքով աշխատեմ: Ես ընտանիք չունեմ, բայց միայն իմ ծախսերը 60 հազարից ավելի են, եթե կես դրույք դարձա՞ չգիտեմ ինչ պիտի անեմ»:

Երեքունի համայնքի փոքրիկ խանութներից մեկի ապակույն փակցված «Պարտքով չդիմել» ցուցանակը հուշում է, որ այդ տարածքի բնակիչները ֆինանսական ծանր վիճակում են. «Ես գրածը չի օգնում, ամեն օր պարտք են վերցնում, մենք էլ չենք կարող չտալ, մեր հարկանքներն ու ծանոթներն են,- ասում է խանութպան Արմենիկը: - Արդեն ես էլ են ստիպված պարտք վերցնում, որ գնամ շուկա, նոր ապրանք բերեմ»:

Արմենիկի խանութում այլևս շուկայի չեն ստանում, քանի որ վերջին ամիսներին այն դժվարությամբ է վաճառվում: «Հիմա ամեն ինչն էլ վատ ա ծախվում, բայց հատկապես քաղցրավենիքը: Կարելի ա ասել՝ մենակ ծխախոտի պահանջարկը չի նվազել, դե, տղամարդիկ ինչ էլ լինի, մի տուփ ծխախոտի փող կզուցեն»: Տղամարդիկ ծխախոտից չեն հրաժարվում, իսկ կանայք ստիպված են հագուստի վրա ծախսվող գումարները կրճատել:

«Ես շատ չեմ զգում ճգնաժամի ազդեցությունը, որովհետև չեմ աշխատում, բայց եթե առաջ երեք շաբաթը մեկ անգամ ինձ հագուստ էի գնում, հիմա երկու ամսում մի նոր զգեստ են ինձ թույլ տալիս, որպեսզի հայրիկիս շատ չնեղեմ»,- ասում է Երևանի պետական մանկավարժական համալսարանի ուսանողուհի Լարիսան:
Ջրուցեց Արման Ղարիբյանը

Հատուկ թողարկումը պատրաստվել է ՄԱԲ-ի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ

հմբազդի Թամարա Գուրգույան Զևակուրովը՝ Կահե Դիմենյանի Տպագրանակը՝ 5000